

Ք ԱՃԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշխարիոյ համար	
Տարեկան	10 ծր.
Վեցամսեայ	5 »
Սրբապատկանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Աւերիկայի համար	
Տարեկան	2.50 ռ.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ	

Պատկանող սուր առաջին երևալիս համար 40 սանթիմ. է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. է. երեկոսին սուր, սև լուսնակա համար 20 Օլո գեղը կըլայ:



Նախկին և նորագիտական հասցիներ
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjom».
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԹՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ П. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՆՈՐ ՄԱԿԴԻՐ

«Ազգային յեղափոխութիւն» ահա մի նոր դարձում, որով մտքով, սրտով ազգային ազգասէրները ուզում են ժողովրդին ոգևորել, շնչոցնել և այդպէսով իրենց ընկած վարկը բարձրացրնել: Պարզ է որ «ազգային յեղափոխութեան համար հարկաւոր է և ազգային յեղափոխական մարմին: ու այդ մարմինը գոյութիւն ունի» — «Վերակազմեալ Ազգային Հնչակեան կուսակցութիւնն» է:

Ճշմարիտ մարդ անկարող է իր հեղինական ժպիտը բռնել յեղափոխական դիմակի տակ կատարված այդ այլնբազում թիւնները տեսնելով և նրանց յկարագրութիւնը կարգալով:

Կարծես թէ մինչև հիմա հայ յեղափոխականները ազգային յեղափոխութիւն չէին անում, ազգային ազատութեան համար չէին կուսում, այլ զոհվում էին Չինաստանի համար և մեր յեղափոխութիւնը չիրական էր:

Մինչև հիմա եղած յեղափոխական մարմինները կամ խմբերը ազգային չէին, այլ արարական իսկ Դաշնակցութիւնը, որ ամենազօրեղ և որոշ չափով ժողովրդի վստահութիւնը և համակրութիւնը գրաւած մարմինն է, բորովին հայկական չէ — նորա հերոսացած անդամները Սպանիացիներ ի համար էին զոհվում: Եւս առաւել հայկական չէ որովհետեւ ձեռք չէ մեկնում հայ դատաւաններին, հայ վաշխապաններին: ԱՅ տգիտութիւն, վատութիւն և շարժառանգութիւն, մարդին որ աստիճանի վերաբարձում էր:

Չէ, ոչ, անցեալ յեղափոխական խմբերը և ոչ էլ Հ. Յ. Դաշնակցութիւնը ազգային յեղափոխականներ չեն, որովհետեւ նրանց պոչին կայած չէ եղի «ազգային» մակդիրը, հա, հա, հա...

Վայ դուք ձեռնածու յեղափոխականներ. մեզք է, ամօթ է. յեղափոխութիւն բառը մի արատաւէր, ձեր կեղծախոս շըրթունքներով մի արատաւորէր, դուք հարեմական յեղափոխականներ անգամ չէք կարող լի-

նել, ուր մնաց ազգայինը. թէև զժախտաբար բոլոր կուսակցութեան զեկը ձեր ձեռքն է ընկել:

Արդեօք այդ ձեռնածու պետ յեղափոխականները իրենք են այնքան միամիտ, որ կարծում են թէ այդ տեսակ շարժառանգութիւններով կարելի է ժողովրդի դրամը կորզել, թէ հայ ժողովրդին այնքան ոչխար են կարծում որ յոյս ունեն թէ նրան կը խաբեն: Այդ ձեռնածուները միամիտ չեն. այդ մենք լաւ գիտենք, բայց հայ ժողովրդին էլ միամիտ չէ. գոնէ նրա գիտակից տարրը. և այդպիսի ձեռնածու յեղափոխականների ծիծառ քարոզները կարգալով ուրիշ բան չէ կարող ասել, բայց եթէ — պարոններ դուք մարմնացած սուտ էք, շարժառանգութիւն և խաբբալութիւն: Մենք ձեզ չենք հաւատում, զզվում ենք ձեզինք. նոյն իսկ եթէ Գրիգոր Կուսաւորիչը զար և ձեր կեղծոյնի նախագահը լինէր, մենք անտարբեր կը մնայինք զէպի ձեր գայլի շարականները. թողէք աղբը, թողէք յեղափոխութիւնը. դիտե՛ք, ձեր հողուն, ձեր սրտին, ձեր մտքին յարմար գործի. ձեր էութեանը և բնազդներին յարմար միմա վայր փնտռեցէք:

Եւ որքան կարելի է շուտով, որովհետեւ դուք շատ ազոտու եցիք հայ յեղափոխութեան միմուրթ տը Խղճացէք այն մաքուր և անկեղծ հայ երիտասարդներին որոնց մինչև հիմա խաղաղիք դարցրիք ձեր ձեռքում և զեռ շարունակում էք դարձնել:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՉՄԻՐ, 16 Հոկտեմբեր
 Այս օրերու բոլոր նոր երեւոյթ մը եւս կայ այս տեղի ազգայնոց մէջ. երեւոյթ մը որ այս անգամ պիտի միջնորդէ ինքն և թէ իսկապէս համոզուէինք որ ներքին բարի արամադրութիւններէ առաջացած շարժում մըն էր այդ զէպի ազգային գործերու բարեփոխումը:

Տեղոյս քաղաքական ժողովը հանդանակութեան սկսած է եւ բաւական դուրս մը հանգանակած է ազգային պարտքը գոցելու համար որ բաւական հազար սոկիներու կը

հասնի եւ մինչև այսօր հարիւրին վեց սոկոս կը վճարէր. այժմ տեղական ազգայինները պիտի գոցեն այդ պարտքը եւ իրենց պիտի փոխանցեն զայն հարիւրին երեք սոկոսով:

Նախ հետաքրքիր է իմանալ թէ ո՞րքէ եւ ինչպէ՞ս առաջացած է այդ 9—10 հազար սոկոս պարտքը. քանի որ ազգային վարժարանը երկար տարիներէ ի վեր անկերպարան ու անհոգ վիճակ մը կը ներկայէ, որուն պատճառաւ շատերը իրենց զաւակներն ակամայ կը յօնձնեն ձգուել Ներու և ուրիշ օտար դպրոցներու գրկը: Եթէ ազգային պիտածէն չի գոցեր իր ծախքերը, մի՞թէ անկարելի էր բացստիկ հանգանակութեամբ մը օգնել դպրոցին եւ կանոնաւոր վիճակի մը վերածելով զայն թէ ազգային փրկէին օտար դպրոցներու վնասակար ապականութիւններէն, աւելով անոնց ազգային մաքուր դաստիարակութիւն ու ստուգում թէ կրկին օգտուել այդ հանգամանքէն, նիւթապէս առանց այսօրուան անպատուաբեր պարտք բեռնելու ազգային սնտուկին վրայ:

Այսօրուան հանգանակութիւնն ալ իր սղեղ կողմը ունի: Տեղոյս փոքրիկ ջոջերէն մին՝ որը քաջ համարուած ու փորձերով ալ հաստատած էր թէ իր հայրենակիցները ոչ թէ սակի ալ սանթիմ իսկ զոհելու արամադրի չեն, ուստի ինքը անոնց վրայ փքանալու փառասիրութեամբ իր միակ միջոց մատին փախած էր այդ ազգայնաբար թէ մենք տանք այդ պարտքը և մեր վրայ անենք զայն աւելի փոքր տոկոսով եւ կամ բոլորովին նստիւնք բացստիկ հանգանակութեամբ ամէն ոք մասնակցելով անոր...» Եւ իր այս տոաշարկը իր մտածածին համաձայն ապաստանելու բարեկող «ձայն բառաւոր անապատի» մնացած էր, որով ինքը իբր ազգասէր մէկ փքուն ինքնախաբէութեամբ ուղեացած էր միւսներուն հանդէպ: Այս օրերին չպէտք կրեի նոյն անձը կրկին հրապարակ նետուած է եւ «300 սոկի ես կուտամ» ըսելով առաջարկած է որ միւսներն ալ մասնակցին. եւ իրաւինչպէս կըլլայ այս անգամ կը զըտնուին միւսներուն մէջ ալ քիչ մը վերաւորութիւններ որոնք ճշտող կուտան եւ կը մարմնացնեն այս ազգայնաբար:

Յաջողութիւն կը մտղթենք սպասելով որ գրուին հանուն եւ միւս կողմէն ալ բարեփոխի դպրոցին վիճակը, որու ներկայ աննախանձելի վիճակը շատ անպատուաբեր է այսպիսի կարեւոր քաղքի մը համար: Սակայն կը վախնանք որ նոյնիսկ հանգանակութեան խնդրը վիճի, քանի

որ, ըստ «Արեւելեան Մամուլ», հանգանակութեան զաղափարէն եւ քաշուած են նախաշատագոզողներէն ոմանք...

«Արեւելեան Մամուլ» ըսինք. Աստուած մամուլ ընէ, արդեօք փոխան ոչ այնքան օգտակար եւ քննաքննելու յատկութիւն ունեցող վէպեր թարգմանելու զբաղուելու, չէ՞ր արժեք կամ կարելի չէ՞ր, որ տեղական ազգային խնդիրները դպրոցական եւ այլ հիմնարկութեանց տխուր վիճակը խորազնին քննութեան առնուէր այդ մամուլն մէջ և անոնց բարեփոխման միջոցները ցոյց տային մեր հակախաղափոխական գրադէանները, ազգասէրները. ու իրենց քաղաքի առանին գործերով պարծէին, փոխանակ հարուստ դրամատերերու դրամասիրութիւնը քաջախելու, չփացնելու որ ըստ այդ մամուլն զատողութեանը այդ դրամատէրներն են եղեր դրական ու ու գործնական խորհող գործողները... Եւ եթէ այս է ստոնց դրական գործունէութեան արդիւնքը վա՛յ մեզ եւ վա՛յ մեր «Մամուլին»:

Ժողովանակէ մը ի վեր (սեպ. 8էն սկսեալ) Իզմիր եւ մասնաւոր շրջականները երկրաշարժը կը շարունակուէր. սեպտի միջոցներ պատճառեց ու դեռ չը գիտենք որքան պիտի շարունակուի: Այսօրնի գծին վրայ մինչև նազլի եւ Տէնիզլի աւմենաւանր տաղանայի ենթարկուած են բնակիչները. Սարայ քէօյ եւ Տէնիզլի բնակիչները՝ վրաններու և տախտակաչէն պարաքաներու մէջ կը բնակին: Այսօրնի ալ բաւական վնաս հասած է. սուրները խախտուելու եւ մասնաւոր թուրքերու թաղերը աւրուած է. բաւական մարդու կորուստ կայ: Կըսուի թէ այս երկրաշարժն ալ վեհափառ Սուլթանի շնորհիւր տեղի ունեցած է եւ այժմ անոր մեծարտութեանէն ժողովուրդը օգնութիւն ստացած կը փառաբանէ իր տիրոջ...

ԹԱԻՐԻՉ, 10 Հոկ.

Անցեալ ամսի 22ին յանկարծամահով վախճանվեց մի հասարակական գործիչ կին, Տիկին Մարիամ Մելիք-Սարգսեանց, 29 տարեկան մատաղ հասակում: Հանդուցեալը իրա ստացած պարզ կրթութեամբ և բնականից ունեցած բարձր ձիրքերով մեծ ծառայութիւններ էր մատուցել թատրիկի հայ ազգաբնակութեան:

«Թաւրիզի Հայ. Բարեգործական Ընկերութեան» հիմնադիրներէն էր, բնակութեան կազմված օրից մինչեւ մահուան օրը, միշտ եղել էր վարչական ժողովի անդամ: Գիշեր ու ցորեկ իրա հանգիստը, տուն ու տեղը, փոքր երախաներին թողած, տնից սուս ման էր դալիս թշուառներին օգնելու և ընկերութեան գործերը վարելու համար:

Վերջերս, վարչութեան նախագահի կամայական և վնասակար գործերին չը համակրելով և չուղեւորվ նրա մեղսակիցը լինել, հրաժարվել էր վարչութեան անդամակցութիւնից և գանձապահի պաշտօնից:

Իբր մայր, իբր տանտիրին և իբր բարեկամ, օրինակելի մի տիպար էր: Ոսկի սիրտ ունէր, իրան դիմողը ձեռնուէն չէր վերադառնում: Ատելով ստուգ էր կեղծը, շողորթիւն, եսամոլին և զազափարնների դաւաճանողին: Գիտակցաբար սաճկահայերի խորին ցախին ու տանջանքներին մասնակից էր, համակրում և նպաստում էր յեղափոխութեան ու յարգում էր ճշմարիտ և ազնիւ յեղափոխականներին, մասնաւոր Պաշնակցականներին:

Թաղման հանդէսը շատ շքեղ կերպով տեղի ունեցաւ և մարմինը, հասարակութեան ցանկութեան համաձայն, Լիլայայի

Ս. Սարգիս եկեղեցու բակում նամակներով: Ակրոջ Հայ հասարակութիւնը և երեւելի երուպացիներ տխուր հանգէսին ներկայ էին: Սրտայոյզ դամբանականներ խօսվեցին Եաչիկ Մ. վր. Դաղեանցի և ուսուցիչ Պ. Մարտիրոս Յարութիւնեանցի կողմից: Համակրողների կողմից նուիրված ութը պսակներ թաղաղը զարդարում էին, որոնց մէջ աչքի էին ընկնում Դաշնակցութեան (խաբիսի արհեստաւորներ), երիտասարդութեան և ուսուցչական խումբի պսակները:

Տիկին Մարիամի մահով, Թաւրիզը մի անդամանելի մեծ կորուստ է կրում, նրա տեղը դեռ չառ երկար ժամանակ պարապ է մնալու:

Հանգուցեալը իր ետեւից թողեց վեց փոքր որբեր, ամենամեծը 12 տարեկան և ամենափոքրը մի ամսական . . .

Մխիթարութիւն ենք մաղթում սգակիր և վշտահար ամուսնուն, և հանգիստ բարի տիկնայ կորներին:

ԳՆԴԱԿ

ՈՒՆԻՍԹ-ՀՊՊՐԸՆ, 13 Հոկտ.

Հոկտեմբեր 8ին տեղւոյս աղատ լաւարնի օրն էր. «Հայրենիք» թերթին մէջ արդէն հրատարակուած էր օրուան խօսողը հանրածանօթ պերճախօս Տ. Գաբրիէլեանի ըլլալը: Շատեր փութացած էին գրասեղ լաւարնի ա-

ռին մէջ ու անով կերթան այդի: Այս նահապետական պարզ սովորութիւնը դեռ եւս այս կողմերէ վերացուած չէ. այս տեսարանը շատ սիրուն է որ թիւրեւ շատերու աչքին ալ գէշ երեւայ:

Կառքը լեցուած է. եղները կամաց կամաց կը գլտորեն դայն ամայի փողոցներու սալալատակներուն վրայ, արթնցնելով առաւօտեան քունի մէջ եղող բաղձաթիւ քաղաքացիները: Ուրախութիւնը ամէնուն երեսին վրայ ալ առ հասարակ կը փայլի. կը ծիծաղին, կը պոտան կը կանչեն. այն օրը բնաւ ամչնալու, քաշուելու օր չէ. որովհետեւ ամէնքն ալ հաւատարմ են. միթէ բնութեան հարազատ և հաւատարմակները չեն:

Օղը բաւական զով է. այնպէս որ մարդ կարող է մտիլ եթէ լաւ չը պատասպարուի:

Այգիներու ճամբուն վրայ դաշտի մը մէջ կը գտնուինք. աշնանային հովը թարթամեցուցած է բոլոր մարդագետիները, որով աչքի առջ կը բացուի դեղին տարածութիւն մը: Արշալոյսի մէջ հեռուէն կրեւայ ծովակ խշխշոց մը կը բերէ ականջիդ. զով հովը կը փչէ կանցնի թառամած ծաղիկներու վրայէն ու կուգայ փայփայել մարդուն երեսները, բերելով իր հետ զանազան հոտեր. վերջապէս այս մթնշաղին մէջ դարձեալ ամէն ինչ իր գեղեցիկութիւնը ունի. ականջի կը զարնեն ու կանցնին օրորողներու փափկահնչուն ձայներ, որոնք

թռնները. արգելք մը ստիպեց զիս քիչ մը ուշանալ, և երբ մտայ լաւրան, յարգելի Տօրթէօրը արգէն սկսած էր խօսիլ: Ու թառնէ աւելի երկսեռ հետաքրքիր բազմութիւն մը կար, այնպէս որ հազիւ տեղ մը գտայ նստելու: Լաւարնի ճակատը երկաստիճան վեր, երեք դէմքեր կը տեսնէի, առաջինը առնախօսն էր սրտաքի վրայ կեցած իր սովորական պերճախօսութեամբ կը շարունակէր խօսքերը. քովը նստած էր լաւարանի Ատենապետը Տ. Մ. Շիշմանեան, երրորդը Ատենադպիրն էր որ տետրակը ձեռքը առնալ գրութիւնը կը գրէր. վերջինը թէեւ անծանօթ էր ինձ, բայց տնունը լսած էի Ս. Ալիփուշարեան: Ժողովուրդը ումենայն լրջութեամբ, անձայն և անշշուկ կուկնդրէր առնախօսը, որուն նիւթն էր «գիւցալնութիւնը»:

Ատենախօսը մէկ ու կէս ժամ, առանց կանգ առնելու, իօսեցաւ, Երբեմն պատմութեան ընտիր օրինակներ մէջ բերելով: Ժողովուրդը ողնորոնցաւ վերջաբանէն, երբ նա ըսու. «բարեկամներ հայ ազգի ազատութեանը մօտ է եւս կը հաստատուի քիչ ատենէն (հասկցնելով 4—5 տարի) պիտի ազատուիք մեր գերութենէն, այն բոլոր աշխատութիւններն ու գործերը որք կը դառնան . . . զիս հաստատակէս կը համոզեն հայ ազգի մօտալուտ ազատութիւնը, սակայն հայրենիք

ինչ կերպով վերադառնալու ենք, այն նախապատրաստութիւններուն մէջ ըլլանք . . . այս առթիւ քանի մը խրատական օրինակներ զրուցելով վերջացուց խօսքերը:

Ժողովուրդը լուռն ծափահարութիւններով իր շնորհակալութիւնները յայտնեց: Տ. Ատենապետն ալ իր շնորհակալութիւնը յայտնեց. նա իր սովորական բնութեամբ սկսաւ շողորթել Տօրթէօրը, սակայն չափազանցութեամբ զգալի ըլլալով պիտի խայտառակութիւն մը եղաւ . . . Տ. Շիշմանեան ժողովը դոցելէն առաջ բերանացի հրատարականը խօսեցաւ. ժողովրդեան ըսելով. «ես այլեւս անկարող կը զգամ ինքզինքս Ատենապետ ըլլալու. անոր համար ընդունեցէք նրա մարականն»:

Ձարմանալի չէ, միայն Երեք ժողովներու էր Ատենապետութիւնը . . . ինչ որ է եթէ հարկը պահանջէ ուրիշ առթիւ կը բացարձեք թէ ինչու համար այն ստանձնեց ու հիմայ անկարող կը զգայ ինքզինքը (- - -):

Տ. Շիշմանեան որ շատերու կարծիքով խելացի և բանգէտ մը կը ճանչցուէր, Երբեմն ինքզինքը ուսումնական ու պերճախօս մը կը հաւատար (անտարակոյս աչքերը դոցելէն վերջ) միտով բանիւ իր և նմաններու կարծիքով ամէն քարի տակ կը գտնուի եղբւր . . . բայց հոս սխալ մը գործեց, մեծ ու անպատուարեր սխալ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ԱՅԳԵԿՈՒԹՐ ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ՄԷՋ

Աշնան անձրեւոտ և ցուրտ գիշերին յաջորդեց զով առաւօտը. արշալոյսը դեռ եւս բացուած չէ. ամէն կողմ լուռ է, ոչ մի կողմէ ձայն չիլնէր, միմիայն զեփիւռին ծառերու սերեւներուն շարժելու շշուկն է ու մերթ ընդ մերթ շունչներուն ու աքաղաղներու ձայնն է որ կը խանգարեն լուռութիւնը. ճիշդ այն վայրկեանին երբ թոյնիկը թողած իր բոյնը կսկսի իր առաջին դայալիկները՝ ծառերու վրայ երգելով բնութեան վայելքները . . . անոնց վրայ ինքն ալ սքանչանալով: Միեւնոյն ժամանակ ուշ չմնար նաեւ Ժիր այգեպանը. որ նախորդ օրուան յոգնութիւնը առած վեց եօթ ժամ քնոյ մէջ, հիմա կը պատրաստուի դարձեալ աշխատելու. որովհետեւ միմիայն այն աշխատութեամբն է որ նա պիտի կարենայ ապրուստ հայթայթել իր ընտանիքին. նա կարթընցնէ անմիջապէս ընտանեաց բոլոր անդամները, որպէս զի մութին կարենան հասնիլ այգի, ու արեգական առաջին ճառագայթները երեւնալուն հոն գտնուին. իրենց սան առաջը արդէն իրիկունէն պատրաստ է կառքը որու վրայ գրուած է ահագին սակառ մը:

Տեսնելու արժանի է թէ ինչպէս այրեր, կիներ, օրիորդներ և մանուկներ կը լեցուն յիշեալ սակա-

կը թնթացնեն պարզ դաշտը. մարդ սկսած կը հրապուրուի. այդ երգերու ձայները երկրական մեղկ կեանքի հաստեածները չեն, այլ հասարակ և աշխատող ժողովրդի պարզ և շարքաշ կեանքը ներկայացնող երգեր:

Արեգակը սկսած է իր պսպուռն ճառագայթները սփռել աշխարհիս վրայ, սակաւ տո տակաւ մտախուզը տեղի կուտայ գեղեցիկ բայց ցուրտ առաւօտեան: Հեռուէն կը տեսնուին այգիներու մէջ մեծ կրակները, որոնց բոցերը մինչեւ երկինք կը բարձրանան. շուրջը հաւաքուած են երկսեռ ընտանիքներ, որոնք կը կը տաքցնեն իրենց ձեռքերը գործի սկսելու համար:

Աշխատութեան ժամը կը հնչէ. սանտիկիւնը հաւաքելով ընտանեաց ամբողջ անդամները՝ կուտայ անոնց ամէն մէկուն ձեռքը մի մի կողով ու կը նշանակէ իրենց կթելու տեղերը. քնքոյ փափուկ օրիորդներ, չնայած օղին ցրտութեան որմէ իրենց այտերուն վրայի կարմիրը կը փայլաւ որունստիլ, զուրեւրը փոթթած մի մի շալ կողովը ձեռքերին կը կթեն հա կը կթեն. մոմալով քթիւնուն տակէն սկսուած երգի մը նազարաթը. անդին մայրը մանկիկը իր գիրկն առած անոր անունը տալու վրայ է. միտ կողմէն մին իր մանկիկը օրօրելու վրայ է. մեծ հայրը կը պտտի այգիին մէջ ու կը հաչուէ մտքէն թէ արդեօք քանի սակառ կարող է լեցնել, կենալով

մէն մի լեցուն օրիտառնկի առաջ. վերջապէս ամէն ոք գործի վրայ է. անգործ մարդ չկայ հոն ուր բնութիւնը տուած է իր բոլոր պարգևները, որոնք յատկացուած են իր զաւակներուն համար, որմէ պէտք է օգտուի ամէն ոք:

Իրիկուն է. կառքերու թխրացը կը լուռի. Ժիր այգեպանին երեսին վրայ կը փայլի գոհունակութեան ժպիտը. նա ապահոված է իր ձմեռուան պարէնը. անոր բոլոր յոյսը իր այգիին վրայ է. ուրեմն կրնայ հասկցուիլ թէ որքան սուղի նստած է Պուլկարիոյ ժողովրդին համար մի քանի տարիներուն անընդհատ անձրեւները, կառքերը հետզհետէ կը յօսեան քաղաքին իրենց առջեւէն բերելով գիւղացի կայտաճին, որ ամենայն ոգեւորութեամբ կը հնչեցնէ իր կայտան. այդ ձայնը անուշութիւն մը ունի հոն. ոգեւորութիւնը ամէն տեղ գոյութիւն ունի: Գործերին վերջացուցած գիւղացի երիտասարդներ կայտան իրենց մէջտեղը առած կը պարեն կը ցատկեն ընդարձակ դաշտին մէջ:

Մութը կը կոխէ. ամէն մարդ տունը կը քաշուի. հանգստութեան ժամը կը հասնի. ամէն մարդ ուժաթափ բնկած կը քնանայ, վաղը նորէն աշխատելու համար:

նախ հարցունենք Տ. Շիշման-
եանի. իր Ասենապետութեան
պաշտօնը ժողովուրդը իրեն
տուաւ. թէ զիւանը իր ներքին
նիստին մէջ որոշեց զինքը, ա-
ռանց վարչութեան իմաց տալու
ժողովուրդին «բերանացի» հրա-
ժարականը տալ—ս'տ է իր գիտ-
ցած օրէնքը. թէ իր ամէն մի
ընելիքը օրէնք մը սեպենք. կե-
րելի այդ քարի տակէն դուրս
մնալու դժբախտութիւնը ունե-
ցեր է :

Բ. դեռ շարժմը առաջ եկե-
ղեցույ յանձնախումբը պաշտօ-
նապէս ժողովի կանչող Ասենա-
պետը, ուրիշ խօսքով մը, եկե-
ղեցին դպրոցէն գերագաս նկա-
տող ու զանի առաջ մղող Շիշ-
մանեանը, ինքը պէտք չէ՞ր ներ-
կայ գտնուէր եկեղեցւոյ վերջին
ժողովին. և ևս ա՛լ Ասենապետ
չեմ ըսելով, իբրև ծանրութիւն
մը վրայէն մէկդի նետեց ու հե-
ռացաւ, որով ժողովուրդի մեծա-
մասնութիւնը կարծելով թէ վեր-
ջացաւ ամէն բան ցրուեցան :

Թող կարգ մը իրեն հետեւող
անփորձները աչքերնին լայն բա-
նան տեսնելու, կը վայելէ՞ր այդ-
արարքը իրեն ու յարանի պա-
տուին. Ուրեմն մի՞ մեղադրէք
ժողովուրդը, մանաւանդ գործն
երկտասարդութիւնը : Իրատնք
տուէք անոնց կասկածելու Շիշ-
մանեանի նկատմամբ :

Ո՞վ է դպրոցի հակառակու-
թեան շարժառիթը, ուսկի՞ց
կը փչէ հովը, որո՞նք են ջուրը
պղտորողները... պարզապէս մի
քանի անհատներ, որոց անուն-
ներն իսկ հոս գրելու պիտանք
կը զգամ :

Վերջին խօսք մընալ, զարգաց-
եալ ու խորհոյք երկտասարդու-
թիւնը այլևայլ միջոցներով որսա-
լու փորձերու մի՞ ձեռնարկէք...
Որով ցանկալի փորձերէն ալ դադ-
րելու ազնուութիւնը ունեցէ՞ք,
զի ինչ որ ցանկէք նոյնը կը հըն-
ձէք... :

Մ. Շիշմանեան անորակելի ըն-
թացիցը հետեւանք ժողովուրդը
անմիջապէս ընդունեց հրաժա-
րականը ու յարանի ժողովը որ
արդէն յրացեր էր գրացուցաւ :

Տասը վաչքիկեան վերջ 35 ան-
ձերէ բազմակցեալ եռանդուն ե-
րկտասարդութիւնը մնաց հոն :
Տ. Թ. Չարչաֆձեանի Ասենապե-
տութեամբ բացուեցաւ երկրորդ
ժողովը. եկեղեցիի հին յանձ-
նախումբը իր օրինական հաշիւը
տալէն վերջը հրաժարեցաւ. եթէ
անձերէ բազմակցեալ վարչական
նոր անդամներ ընտրուեցան
գաղտնիքով էից առաւելութեամբ,
որք են՝

Տիրաք Ա. Կիւլիեան, Թ. Շար-
չաֆձեան, Յ. Խումրիկեան, Կ.
Չանգալեան, Յ. Բրուտեան, Յ.
Պոյաձեան, Մ. Շիշմանեան : Յա-
ջողութիւն կը մաղթեմ :

Ընտրուածներու միջեւ ամենէն
վար քուէն ստացաւ Մ. Շիշման-
եան : Թե՛րեւս ընթերցողը ինքն
իրեն ըսէ, հապա ինչո՞ւ վերստին
քուէ ստացաւ. այո, իրաւունք
ունի հարցնելու, բայց քուէ
տուողները երկու բանի համար
տուին. նախ որ յարանին հետ
որ և է կապ չունի անիկայ. ապա
երկրորդ անգամ մըն ալ փոր-
ձելու համար... :

Արդեօք պիտի փոխէ՞ք բնու-
թիւնը... : Նայինք :

ԻՄԻ ԱՇՏՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ԽՄԻԱԿՐՈՒԹԵԱՆ

Ամիսէ մը առաջ է որ վարժա-
րանը վերաբացուած է. աշա-
կերտները կրկին դրասեղան-
ներու առաջ խոնարհած իրենց
ուսմամբ կը պարտային : Որչափ
քաղցր է տեսնել այն մանուկ-
ները որոնք ծրար մը իրենց
թեւին տակ ամէն օր կշտապեն
դպրոց ուր պէտք է պատրաս-
տուին ապագային մարդ լինե-
լու. իրենց ընդունակութեան
չափով : Տեղւոյս հայութիւնը
թրքախօս է. 20 տարուայ ըն-
թացքի մէջ զգալի փոփոխու-
թիւն կրած չէ, դէպի դպրոց
անհոգ և անտարբեր գտնուելով.
մինչդեռ արդող ազգը հսկայա-
քալ յառաջդիմած է. բայց
այժմ իրենց թերութիւնը զգա-
լով ջանք և զոհողութիւն չեն
խնայեր իրենց զուակներուն
ուսման և յառաջդիմութեան հա-
մար : Կրթական գործը վերջին
տարիներուս առեր հաստատուն
հիմքու վրայ դրուած է. իրենց
պաշտօնին դիտակից երկու դա-
սատուներ կը վարեն դպրոցը,
որոնք այս տարի ալ վերահաստա-
տուեցան իրենց պաշտօնին մէջ.
և ինչպէս նախորդ տարիներուն
մէջ արդիւնաւէտ եղած են նոյն-
պէս և սակէ յետոյ կը խօստա-
նան անձնուէր աշխատութեամբ
և եռանդեամբ օգտակար ըլլալ
տեղւոյս մանուկներուն ուսման և
գասախարակութեան համար : Ամ-
բողջ ժողովուրդն ալ գոհ է ա-
նոնց պաշտօնավարութենէն, ա-
սոր համար ալ վերստին պաշտօ-
նի կոչուեցան. լիայոյս եմք որ
իրենց պաշտօնին գիտակից,
խղճի մտք պիտի ջանան բարձր
պահել աշակերտաց ուսման և
բարոյական մակարդակը :

Տեղւոյս հոգեւոր Ս. հայրն ալ
իր 7—8-ամուսան պաշտօնավա-
րութեան մէջ գնահատելի վարք
մը ունեցած է և ժողովրդեան
համակրելի եղած : Կղզիացեալ
վիճա՛րն մէջ գրական աշխատու-
թեամբ ժամանակ կանցնէ, այո-
պէսով օգտուիլ ջանալով. իր մէկ
աշխատասիրութիւնը տեսած եմ
բաւական հետաքրքրական և շա-
հեկան, այն է Հայաստանի Ս.
վայրի մը (Աղթամար) թէմերու

և վիճակներու մի նկարագրու-
թիւնը. ըստ կարելոյն մանրա-
մասնութեամբ պարզուած անոնց
անցեալը, թէպէտ և նուազ ու-
սում սուս, սակայն ինքնօգնու-
թեամբ բաւական զարգացած է.
Հոս յաջորդաբար մի քանի հո-
գեւորականներ եկած գացած
են, առանց երբէք հիմքը նկու,
ասոնք ընդհանրապէս ծոյլ և ան-
հոգ, տուն, խանութ, սրճարան
և այլ տեղեր մանցալ և անհամու-
անօգուտ շառլազանութիւններ
ընելէ ի զատ ոչինչ բան մը ըրած
ունին և զուտանք հաս իրած են
իրենց վրայ. առնց մէ մէկ քա-
նին տեսած եմ, որոնք իրենց
չահէն և եակմուտէն անդին ոչ
մէկ բանի վրայ կը մտածեն :
Մենք գոհ ենք որ մեր արդի
հոգեւոր հայրն այս տղեղ կող-
մերը չունի և համեստ գումարով
մը բաւականացած կաշխատի ըստ
կարի ժողովրդին և ազգին ծա-
ռայել, կատարել ջանալով դէպի
անոնց ունեցած պարտականու-
թիւններն առանց զանցառու-
թեան :

Գաղաքից թերթերէն մէկուն
մէջ տեղւոյս գաստատուներուն և
հոգեւոր հօր նկատմամբ թշնա-
մակսն և զրպարտիչ գրուածքն
նօղկանօք կարգացինք. Յօդուա-
ժագիրը իր այդ եպիտելիքնա-
դատականով վարկաբեկ և խայ-
տառակ եղած է ժողովրդին աչ-
քին առջեւ, մինչդեռ վարժա-
պետները և վարդապետ կրկին
վարկ և համարում կը վայելեն.
Թէեւ տեղւոյս պաշտօնական
մարմինը ժամանակին ատոնց
պէտք եղած կերպով պատասխա-
նեց «իրաւունքի և լրագրիչ մի-
ջոցաւ, սակայն աւելորդ չեմ
համարեր ես ալ իմ կարգին այս
թշնամական գրուածքն. և իբ-
րեւ անկողմնակալ խորհուրդ կու-
տանք յիշեալ Պարոնին որ, ի
զուր ճշմարտութենէ չեղելով
այդպիսի պառակտիչ և կուտակ-
ցական որմներ չը ցանէ. մենք
վարժապետի և վարդապետի
կողմնակից չենք, այլ ճշմարտու-
թիւնն է որ կը փափարինք
պաշտպանել. իրաւ է որ մեր
վարժապետները համախարանա-
կան չեն, սակայն մեր պէտքին
բաւական են, և աւելին ալ.
Նմանապէս վարդապետնիս : Ուս-
տի հրատէր կը կարգանք անոնց
որոնք չեն ախորժէր յիշեալնե-
րէն, կարող են անոնցմէ նա-
խընտրելիները բերել հոս. և
ի՞նչ է իրենց դժգոհութիւնը.
ունի՞ն բանաւոր պատճառներ
անոնց պաշտօնին նկատմամբ.
պարզերես հրապարակ թող գան
և մատնանիչ ընեն անոնց թերու-
թիւնները, որպէսզի ազգը համոզ-
ուի և իր լուծմանը աւելի ար-
ժանաւորներու վճարէ. իսկ եթէ
չէ՞ թող լռեն և աւելորդ տեղը
ինդիր շի յարուցանեն նոյա հաս-
ցէին ուղղեալ սուտ ու յերիւրեալ

գրութեամբ ջանալով նոյա պա-
տիւր ազարտել :

Սեպ. 17ին հոս ժամանեց Պուլ-
կարիոյ այցելու հովիւ Պաղճեան
Ս. հայրն. մի քանի անդամներ
քարոյ խօսեցաւ կիրակի սեպ. 26
Ս. պատարագ մատոյց և օրուան
պատշաճ քարոզով մը միջիթա-
րեց ժողովուրդը հոգեւորապէս,
և սեպ. 26ին մեկնեցաւ Սօֆիա :

Այս տարի նոր հոգաբարձու-
թեան ընտրութիւն չեղաւ. ընտ-
րութիւններու միջոցին տեղիս
կարեւոր մէկ մասին բացակայու-
թեան պատճառաւ : Կառավարու-
թիւնը նախորդներու պաշտօ-
նավարութիւնը վերահաստատեց :
Արդի թագ. խորհուրդ և հոգա-
բարձութիւն երկար տարիներ
իրենց պաշտօնին մէջ կը շա-
րունակին ջանալով ըստ կարե-
լոյն պայծառ պահել դպրոց և
եկեղեցի. հոս ժամանակի հո-
ւովումներու մէջ կուտակեցան
մեծ կուրսեր և պառակտումներ
տեղի ունեցած են, սակայն այժմ
տեղւոյս ժողովուրդը խաղաղ և
համբարձխ է դէպի ազգ. գոր-
ծերը : Այլեւս փորձառու ըլլալով
խոյս կուտան սեւէ պառակտում-
ներէ և կուրսերէ, թէեւ նիւ-
թապէտ նախանձելի վիճակ մը
չունին, բայց միշտ կը նպաս-
տեն իրենց դպրոցին և եկեղե-
ցիին ամէն ժամանակ երբ հար-
կը պահանջէ. նմանապէս չեն
զլանար սեւէ նիւթական օգնու-
թիւն իրենց թշուառ ազգակից-
ներուն, որոնք խեղճ և մերկ հոս
կուրսն կարօտ ու թշուառ վիճա-
կի մէջ : Մինչեւ ցարդ այսպէս
քանինն՝ բեկած և գացած են,
և կարելի եղածին չափ ամէնուն
ալ օգնած և նպաստած են :

Բագարճրդէն հայ մը
Թաթար-Բագարճրդ. 9 Հոկտ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Արարկիրի մէջ տասը բան-
տարկեալներ այս վերջին ներ-
ման արժանացեր և ազատ ար-
ձակուեր են :

— Տիխիսի մէջ վախճաներ է
Տիկին Մարիամ Դաւիթեանը, որ
իր մօրը կտակեր է Գ. Ճեմարա-
նի 2000 բուպի տալ, հոն և
չբաւոր ընտանիքներէն մէկ որ-
դեգիր մը պահուի այդ գրա-
մագլխին տոկոսով :

Ասկէց զատ հանգուցեալը 500
բուպի կտակեր է Տիխիսի ներ-
սէսեան վարժարանին 300 բուպի
կարբու վարժարանին 300 բուպի.
Տիխիսի հայ կիներու Բարեգոր-
ծական ընկերութեան, 200 բուպի.
Տիխիսի կանանց տպահովութեան
գաճարանին, 100 բուպի ալ
Սողոյաքի չքաւորներու ճաշարա-
նին :

Ուրիշ տիկին մըն ալ ներսե-
սեան վարժարանին նուիրեր է
1000 բուպի :

— Տիգրան վաշա Ապրո եւրո-

